ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՃԱՄԲԱՐԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Ճամբարակ համայնք
ՀՀ, Գեղարքունիքի մարզ, ք.Ճամբարակ, (0265)22255, chambarak.gegharquniq@mta.gov.am

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

13 ՆՈՅԵՄԲԵՐԻ 2026 թվականի N 1486-Ա

ԱՆԺԵԼԱ ՄԵԼԻՔՅԱՆԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՊԱՏԿԱՆՈՂ ՀՈՂԱՄԱՍԻ ՎՐԱ ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՑՎԱԾ ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՕՐԻՆԱԿԱՆ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, ՀՀ «Քաղաքացիական օրենսգրքի» 188-րդ հոդված,ՀՀ կառավարության 18.05.2006թ. թիվ 912-Ն որոշման 11-րդ կետի գ-ենթակետով, ինքնակամ կառույցների օրինականացման և տնօրինման կարգը հաստատելու մասին որոշմամբ և հիմք ընդունելով սույն կարգի 2-րդ դրույթի սեփականության իրավունքով պատկանող հողամասում գտնվող ինքնակամ կառույցների օրինականացման 8-րդ կետը, համայնքի բնակիչ Անժելա Մելիքյանին սեփականության իրավունքով պատկանող Ճամբարակ համայնքի Արտանիշ բնակավայրի 05-018-0130-0116 կադաստրային ծածկագրով հողամասում ինքնակամ /2026AU5VPT/ կառուցված շինությունների պահպանումը չի խախտում այլ անձանց իրավունքները և շահերը, կառուցված չէ քաղաքաշինական նորմերի և կանոնների էական խախտումներով,ինչպես նաև հաշվի առնելով,որ շինությունը կառուցված է իրեն հատկացված հողամասում.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Ե Մ՝

1. Անժելա Մելիքյանի կողմից սեփականության իրավունքով պատկանող 0.1020 հա հատուկ պահպանվող՝ հանգստի համար հողամասում ինքնակամ/2026AU5VPT/ 2018 թվականին կառուցված 24.51 քմ արտաքին մակերեսով քոթեջը,53.75 քմ արտաքին մակերեսով տնտեսական շինությունը և 11.05 քմ մակերեսով պարիսպը ճանաչել օրինական:
2. Քաղաքացի Անժելա Մելիքյանը պարտավոր է 89.31 քմ ընդհանուր արտաքին մակերեսով ինքնակամ շինությունների օրինականացման համար համայնքի վարչական բյուջե 900185061158 հաշվի համարին վճարել 156200 /մեկ հարյուր հիսունվեց հազար երկու հարյուր/ ՀՀ դրամ, համարել օրինական Անժելա Մելիքյանի սեփականություն:
3. Սույն որոշումը հիմք է պետական գրանցում ստանալու համար:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ **Վ. ԱԴԱՄՅԱՆ**

2026թ. նոյեմբերի 13
ք. Ճամբարակ